

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 արեւիկան 12 ծր
 վեցսուսայ 6 »
 Արսասահմանի
 համար արեւիկան 15 »
 վեցսուսայ 8 »

Աւերելույի համար
 արեւիկան 3 ծր.
 վեցսուսայ 1.50 »

Մանուկան տղա առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանիսի է. երեքին անկիւն զամբարան համար 20 ՍՍ զեղջ կրտսայ.

Վառնայի համար անիկ 10 սանիսի

ՇԱՐՇՈՒՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԻՒԻ ԶՈՐԵԲՇՆԱԹԻ ԵՒ ՇՐՈՒԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalmencarian, Mechitaristengasse W. 4. Vienne

Նամակ եւ դրամ դրկիկ հոլանդացիքանս հասցիին.

Редакция на вѣстникъ «Шаржунъ» Варна
 Redaction du journal «Charjoun» (Bulgarie) Varna

Պուշկարիոյ համար անիկ 15 ՍՍ.ԹԻՄ

Գրութիւնք եւ չին տուիր

ՍԻՆՉԵՒ ՈՒՐ ՊԵՏՔ Ե ՀԱՍՆԵՆՔ

Սի շարք մարդիկ իրենց նպատակ են դրել Դաշնակցութեան վարկը կտորել ամենաստոր միջոցներով. ամեն ճիգ թափում են դաշնակցականներին գրգռել, կատիցնել և այդպէսով ստեղծել այն եղբայրասպան կոիւր, որի ստուերից այնքան փարիսեցիւրաբար և լրբորէն նիզձեղով վախենում են.

Դաշնակցականները ծեծում են ինչու, որովհետեւ ամեն մի ցած արբան թոյլ է տալիս լրբաբար զրպարտել Դաշնակցական անհատներին: Զրպարտութիւնները, սպառնալիքները միթէ կարող են դաշնակցականներին զպել, վախեցնել տալ: Մեր կարծիքով ո՛չ:

Մատնութիւնով, բուլգար կառավարութեան ստիւլութիւնը գէպի Դաշնակցականները գրգռելով միթէ կարելի պիտի լինի դաշնակցականներին ստիպել ստրկանալ և խոտորհել մի շարք ցած արբաններին առջեւ: Մեր կարծիքով ո՛չ:

Դաշնակցականներին գործը անյաջողութեան մատնելու համար այդ գործողութիւնը միջոցները ոչ նպատակաւոր մար են և ոչ պատարբեր հայ ժողովրդի համար:

Գաղափարի հակառակութիւնը լրբութիւնով, մատնութիւնով, ցածութիւնով չէ որ պէտք է արտայայտուի: Այդ միջոցները աւելի գրգռող, աւելի զայրացնող, աւելի յանգուզն քայլեր անելու ստիպող միջոցներ են այն մարդկանց համար, որոնք վաղուց ձեռք են քաշել հանգիստ կեանքից և սպազայից: Սեղափոխական զօրեղ կազմակերպութեան ետեւից ընկնելը յիմարութիւն է. նա երբէք չի մոռանայ իր վրէժը աւելի կատաղաբար լուծելու յարմար ժամանակին: Ամօթ է և ժամանակ է սանձահարելու մեր փշա-

ցած նկարագիրը. ժամանակ է չափ դնելու մեր թրքական բընազգներին, որպէսզի ապագայում աւելի վատ տեսարաններին հանդիսատես չը լինենք: ՎԱՐԴՅ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ձիւլիպէի մէջ տեղի ունեցած դաշնակցական հանգանակութիւնը կրկին առիթ տուած է խումբ մը վատերու հանդէս գալ մատնիչութեան կերպարանքով: Այնպէս որ այդ հաւաքական մատնիչութիւնը տեսնելով է որ մարդ կուզայ այն եղբակացութեան թէ մատնիչութիւնը հայուն նկարագրին մէկ բնական մասը կը կազմէ: Այդ մատնիչութիւնը ըրած են ոչ թէ պարզ անհատներ, այլ յեղափոխական կուսակցութեան պատկանողներ Դաշն. հանգանակութիւնը արգիւլելու համար: Կարգ մը ստորարարածներ հաւաքուելով վերակազմեալ Հնչակեանի մը տունը, ընդարձակ զրպարտողական տեղեկագիր մը պատրաստեցին և մատուցեցին պուլկար կառավարութեան, որպէսզի պուլկար կառավարութիւնը Ձիւլիպէէն աքսորէ Դաշնակցական երիտասարդները: Բայց պուլկար կառավարութիւնը միշտ իր անունին վայել ընթացքը բռներ է հայ մատնիչներու երեսին լուսայն թքելով:

Անցեալ «Իրաւունք»-ին մէջ «միութենական» ծածկուսանունով յօդուած մը կար որուն մէջ կը յայտարարուէր թէ դաշնակցականները զսպելու համար պէտք է դիմել «խոհեմ և յանդուգն» միջոցներու: «Միութենական» առաջարկած խոհեմութիւնը անյուշտ մատնիչութիւնը և զրպարտութիւնն է: Ազտուտ, ստոր միջոց, բայց ցածերու և վատերու համար նպատակաւոր միջոց: Այդ մատնիչներուն բանակին

մէջ խելքը գլխուն մարդ մը չը կայ որ հասկցնէ թէ մատնիչութիւնը անկարող է խորտակել կուսակցութիւն մը: Ստորագրուած ան աւելի պատրաստ էր դառնայ որ կարողանայ խոտորէն վարուիլ: Հետո՛

Թերեւս մատնիչները զարծեն թէ ինքզինքնին գաղափարի հակառակորդներ ներկայացնելով պիտի կարենան ազտուտ իրականութիւնը ծածկել, հասարակութեան համագրութիւնը գրաւել, ու կուսակցականները վարկարկել: Կը սխալին:

ՍԵՐԵՍՏԱՆԻ ՀՈԳԻՆ ՈՒՐ ԳԻՍՑ

Առաջները բարեկամ երես մէկը այսպէս կը հարցնէր ինձի. խնդրեք եթէ հանրային բարոյականին չը վերաբերէր, պէտք էր մտողուի առ յաւէտ, սակայն քանի որ հակառակն է, ըստ իս աւելորդ չը պիտի լինի կարծեմ իր պատասխանը հրապարակու տալ:

Թէեւ հարիւրին իննսուն չեմ յուսար թէ այդ բարեկամը նպատակաւոր տուած լինի այդ հարցը. բայց յակամայս թէեւ սակայն անմիջապէս միտքս եկաւ 301 թիւ «Շարժում»-ի մէջ նոյն այդ հերոսին թարգմանութեամբ լոյս տեսած հետեւեալ տողերը «միայն հայրը ու զաւակը զըտնուեցան ազգը սորվեցնելու. իսկ խելօքները կսեն—խելացին պէտք է զգուշանայ զինքը վատագի ենթաբնակէ...»—նմանապէս «խնձի ծանր եկաւ մի քանիսի հեգնական ակնարկները թէ «Տղաս թրնովայի վային պիտի ըլլայ եզեր» իրենց մատը անգամ չեն կտորեր ուրիշներու օգտին համար...»:

Զեմ յուսար թէ բարեկամը այնչափ միամիտ լինի որ (քանի որ ուսման ու զարգացում մի տեսակետէն ինձ մէ անհունապէս բարձր է) զժողովարքայութեան վրայ հաւատք ունենայ, ու այդ նպատակաւ ինձ ուղղած լինի նոյն հարցումը:

Կամ այն է որ Սէրբիսեանի մը մէջ կուզէ անպարծութեան անսանձ տեն ջանք մը կամ ըղիկային հիւանդութեան մը արտանիշը տեսնել որուն բորբոքման մէկ վայրկեանին յախուռն կերպով նետուած ըլլայ վտանգին մէջ,

եւ կամ պարզապէս իմ անհատական կարծիքս հասկնալ:

Առաջին պարագաներուն, մարդ մը շատ կարճ դատողութեան տէր լինելու է որ մտածէ թէ, սիրամարգի յաւակնտուութիւններ ունեցող մէկը որ միշտ կը տեսնայ, ինքզինք բարձր ու եզակի ծախել միմիայն տեսականապէս, հետեւաբար իր «Ստիւն համար միայն ապրիլ, այդպիսի մէկը իր ոլիմպիական բարձունքներէն ինչեղով, իր ամենաջնջին վայրէջքներէն իսկ հրաժարելով, մէկէ աւելի անգամներ, արհամարելով ամէն վտանգ, թողու հանգիստ կենցաղը ծախելով մէկգի դէն օսլայած օձիքը, փափուկ կօշիկը, ճոխ կեանքը, ու երթայ ամիսնելով հետիտուն, ընդհանրապէս անօթի ծարաւ, շարկած զէնքի բեռը, մահը փնտոէ եւ այն ալ սոսկ օդային սնապարծութեան մը յագուրդ տալու համար:

Թէեւ հայ յեղափոխութիւնը հերոսներ շատ տուաւ, սակայն Պետո սովորական հերոսներէն անով բարձր է որ անվեհեր ու աննկուն կողող զինուոր մը Լոլաւ միջնու վերջին յունչը, իր հայրենիքի դժբախտութիւնը իր նկատեց, անոր վեհ սիրտը չը կրցաւ դիմանալ ու հանգիստ ընել, քանի որ իր սիրելի հայրենիքը զըժբախտ էր, առջինը սեպեց իր հանգիստը: Կամ պէտք էր հայրենիքը ազատել եւ կամ անոր ազատութեան կուռն մէջ իր մահը գտնել: Զէն ի ձեռնին միշտ կուռեցաւ հայրենիքի ամենավտանգաւոր կէտերուն վրայ, ու միեւ նոյն ժամանակ չը դադարեցաւ իր գրիչն ալ իսպաս զնեյէ իր բարձր իտէլիան տարածման, կատարեալ փրօպականդիստ ու առողջ գաղափարներով տողորուն, ինքը թըրքական դժոխք զնդանին մէջ, վատ ու անգութ թշնամիին զարհուրելի եւ աներեւակայելի տանջանքներուն ենթարկուած ատեն, հոս «Շարժում» կը հրատարակէր անոր կրակոտ թարգմանութիւնները:

«Բօլզարացին» անով բարձր է որ, ինքը արտասահմանի զաւակազատ միջավայրի մէջ ծնած, բարեկեցիկ ընտանիքի մը անգամ, փայլուն պայտօսներ ձեռք բերելու կարող, սակայն նա արհամարեց բողբոջ, թէեւ վերջին ծայր զգայուն ու ազնիւ, բայց անդրդուելի մնաց իր նշանաբանին հանդէպ: Իր հաստատ առաջադրութիւնէն մազի չափ չը կըրցան շեղեցնել զինքը. ոչ ընտանեկան գորովն ու գուրգուրանքը եւ ոչ ալ սպազայի յաջողութեան շողջողուն յոյսերը: 28 տարեկան ամենէն վաղուուն հասակին մէջ, կոյսին սէ-

ըը չը կրցաւ հրապարակել իր երկաթէ կամբեր եւ ոչ ալ զարհուրեցուց զինքը թշնամիին վայրագ ու անգուժ շարժարանքները . զնդանը . շղթան ու կախադանը : 36-37ին ի վեր երբ գոյնդոյն յեղափոխականներ չունելնին արտասահման կառնելին . եւ կամ Աքէնէ վերադարձող ու իրենց հուսկը բարձրացնելով . զայն շահակիրնք բարձրացնելով . պղտոր ջրի մէջ ձուկ որսալու կուգային . այդ աննման հերոսը զէնքը շալկած . տըրելը ի յոտին նանասօր կը մեկնէր . այն երկիրը կերթար ուր զարաւոր ստրուկը . փոխանակ իր դահիճին դէմ ճակատ առ ճակատ յուսահատի կռիւր մղելու . լքանելով իր օճախը արտասահման կը փախչէր . ինքը արտասահմանէն կերթար կուուելու . այդ զժբախտ ժողովուրդին համար . վըտանդներէ մազապուր երբ իր ծնընդավայրը դարձաւ . գունուիցան «չապը շէքէր» տեղ կը կրկնուէր աշխատող խմբագիրներ որոնք այդ աննման հերոսը . ամենադոտող զրպարտութիւններով ու զեցիքն մրտակ . այդ էր վարձըր ճշմարիտ ու գիտակցից հայրենասէրին . սակայն նա արհամարեց այդ սեւ սփրտ սպերախաներու ընթացքը . ու իր համոզումներէն մագի շափ շը շեղեցաւ . իրեն անկարելի էր արտասահմանի մէջ անգործ նստիլ ու լուիկ մնլլիկ հանգիստաւար ըլլալ առնմանին հայրենիքի անլուր աղէտներուն . այն ասեմը երբ Չէյթուենի հերոսներ . անարգ դատաւորութեան կողմէր կուղղէին ժողովուրդին . ինքը նորէն անցաւ տառապանքի աշխարհը եւ աւելի բարձր օրինակ մը տալու համար . միմիայն Օննիկ ու Թաթուլներով չը բաւականացաւ . ընկեր սուս նաեւ համարող ժողովուրդի մը զաւակներն էա :

Այո՛ թէ եւ վատ թշնամիի անարգ կախաղանը վերջ տուաւ անոր թանկահին կեանքին . սակայն իր սուրբ յիշատակը անմահ պիտի մնայ զարուցի զարս հայ արտերու մէջ : Այդպիսի սուր կրնանք պարծիլ մեր շատ մը հանճարի տէր ու զարգացած . լեզուագէտ . գրագէտ եւ գեղարուեստագէտներով . բայց պահ մը լսենք հայրենասէր մեծ բանաստեղծին ցասկօտ խօսքերը զմեծ ուսում առիւր եղար գիտնական . զովեստղ լցուած է մարդոց բեխան . բայց թէ քոյ ուսումէդ շահ չունի Հայաստան . թքել ենք . . . ալ . ուսմանդ ալ վրանա : Արդարեւ պատմութիւնը կրնայ մեզ ցոյց տալ . շատ ու շատ եւրոպական համալսարանաւարտներ . որոնք իրենց ժամանակին մէջ մեծ հռչակ ու համբաւ հանած ըլլան բայց դուն ուրեք տեսնուած են Սէրէմիտանի կամ Սերտքի նմաններ որ յանուն հանրային դատի . անյողողդ քայքայումին յեկախաղանհ հասած ըլլան :

Արդի Հայ երիտասարդութեան ստուար մէկ մասը ոչ թէ իր անձը այլ իր-հանգիստէն մէկ վայրկեան . իր քսակէն մէկ սանթիմ իսկ զոհելու սրամազրութենէն շատ ու շատ հեռի է . սակայն իրենց սրճարան սիլին ժամերու մէջ միշտ հաճոյք կը գտան զնադատելու . ազգային յեղափոխութիւնը եւ անձնուրաց մարտիկներու գործունէութիւնը : Հայ երիտասարդութեան այդ խոշոր հատուածը . որչափ ալ յոխորդայ . որչափ ալ ինքզինքը բարձր կարծէ . սակայն և այնպէս ընդհակառակը տեսահման կերպով պզտիկ ու փոքրոգի կը ներկայանայ մեզ . վասնզի Հայ երիտասար

դութեան տեղը արտասահման չէ և ոչ ալ իր պարտականութիւնը յեղափոխական գործունէութիւնները քննադատելուն մէջ կը կայանայ :

Թշնամիին մեր քոյրերը մեր եկեղեցիներուն մէջ կ'անպատուէ . հայրենական ու պապենտկան օճախներնիս մոխիր կը սփռէ . զմեզ մեր 3-4 հազար տարուան հայրենիքէն վտարելով . մեր տեղերը աշխարհի չորս կողմերէն մահմէտական գաղթականներով կը լեցնէ . ու այս սարսուտ ցոլացիլ իրողութիւններու հանգէպ . առանց դոյզն գործունէութեան մղուելու . մենք անհոգ ու անտարբեր . օտար վայրերու մէջ . մեր զգուշի սեռքը քարէ կուտանք . ու նոյն իսկ գործողները կը քննադատեն :

Արտասահմանի մէջ մեզ պէտք չեն առ այժմ (բայտ իմ կարծեաց) ոչ այս ինչ և ոչ ալ այն ինչ խումբեր ու ընկերութիւններ . այլ միայն և միմիայն յեղափոխական զօրաւոր խումբեր ու ալ աւելի զօրաւոր փրօփականտ . վասնզի քանի որ չինք երթար անձնականապէս կուուելու . գէթ կուուողներու յոյս ներշնչենք . քաջալերենք զիրենք . հաղի ու զէնքի դրամ հասցենք . ալ բաւ է . ալ անօթ է այսչափ անպարտաճանաչութիւն . որ հայ կարող չէ ամիսը մէկ երկու ֆրանք վճարելու . այդ վսեմ ու անհրաժեշտ նպատակին :

ՄԱԿԵՐՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Եւրոպական թերթերուն յուլիս 19ին Պոլսէն կը հեռագրեն որ Տրամայի քովերը պուլկար հրօսախմբի մը և թուրք զինուորներու միջեւ արիւնքալի ընդհարում մը տեղի ունեցեր է : Պիթօլիայի մէջ կուսովարութիւնը ազգաբնակչութեան . յայտարարութիւններ ցրուել է զէնքերը յանձնելու համար . այդ . յայտարարութեան հանդէպ 36 գիւղեր ապստամբեր են :

Գերմանական թերթի մը Պուլսէն կը հեռագրեն Ստրուսիցայի քովերը տեղի ունեցած կռի մասին տարածուած լուրերը ճիշդ են : Բազմաթիւ հրօսախմբեր իբրիլէքի և Գրուչէվայի գաւառները տարածուած են . յուլիս 24ին Տրամայի և կէկէլիի մէջ ջերը զինուորներու և իրօտարութիւն միջեւ ընդհարումներ տեղի ունեցեր են :

Այնպէս որ Մակեդոնիան ամբողջովին կրակի մէջ է . օրէ որ հրգեհը բռնկելու նշանները աւելի կը շատնան :

«Իօյիթիլ» Գօր. Սօֆիաէն կի մանայ որ Ռուսական և Աւստրիական դեսպանները գիմած են Պուլկարիոյ արտաքին գործոց նախարարին որպէս զի իր ձեռքէն եկածը գործ դնէ Մակեդոնիոյ մէջ խաղաղութիւնը պահպանուելու համար . նախարարպետը խոտտացած է :

Երկու պետութեանց այդ զիմուներուն պատճառ եղած են

Սարաֆօլի Սօֆիա վերադառնալը . գնդապետ Եանքօֆին Մակեդոնիա մտնելը և հրօսախմբուն ստուար թուով երեւան գալը :

Պուլկար կուսովարութիւնը բաւական զօրք զրկած է սահմանագիւղները . որպէսզի Պուլկարիայէն հրօսախմբերը չը կարնան թուրքի մտնել :

Մէկ խօսքով պզտիկ Պուլկարիան երկու կրակի մէջ մնացեր է . ոչ կրնայ լուս հանդիսատես մնալ իր եղբարց տառապանքներուն և ոչ ալ կրնայ ուշք չը գար ձնել երկու մեծ պետութեանց սպառնալիքներուն վրայ : Հիմա կու հիմա Պուլկարիոյ պետական մարդիկ շատ փափուկ վիճակի մը մէջ կը գտնուին :

ՎԱՌՆԱՅԻ ՀՍՅՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի Ծրուանէ սկսեալ վասնայի հայութիւնը մեծ յուզումի մէջ է . որովհետեւ երկու անախտ զէպքեր տեղի ունեցան . Երկուշաբթի առաւօտ դաշնակցական երիտասարդ մը դիպուածով ծովային պարտէզին մէջ . բնգհարում մը կուենեայ անծանօթ երիտասարդի մը հետ եւ գաւազանով կը հարուածէ զայն : Հարուածուող երիտասարդը լալէն . ալ մրկելէն . սուրիյէն կը թողու եւ կը փախի . ոստիկանները վրայ կը հասնին . ետ կը դարձնեն փախողը եւ զայն կցական երիտասարդին հետ ոստիկանատուն կը սանին : Հոն է որ կը պարզուի թէ զիպուածով ծծուողը . Վերուոնք օի աշխատակից ֆիրկպեցի Գրեգոր Թիւթիւնճեանն է եղեր . Երկու երիտասարդները ժամի մը շափ ուշատ լուսալէն յետոյ ազատ կարձակուին :

Այդ տխուր թէեւ քիչ մը զաւելտական դէպքը տեղի ունենալէն վերջը Վերուոնք օի մէջ երեւան կուգայ դաշնակցականներու շահատակութիւնները վերնագրով յօդուածը «միութեանական» ստորագրութիւնով . որուն մէջ յսկանէ յանուանէ կը տըրուի Մեքսիկա վարժապետանի անունը . Մեքսիկա վարժապետանի միւս առաւօտը կերթայ Գուրպէթեանէն . Վերուոնք օի խմբագիրէն . բացատրութիւն պահանջելու իր հասցէին ուղղուած գրութեան համար . Ու այդ տեղ մեծ ընդհարում մը տեղի կուենայ : Գուրպէթեան եւ Վարժապետեան իրար կը պլուրին . ու կը ծծկուին . Գուրպէթեան . ճակատակորդի կատարողութենէն սարսափահար հազիւ հազ կը կարենայ իր ատրճանակը հանել եւ ուժաթափ եղած ձեռքերով քանի մը անգամ պարպել . Բարեբախտաբար ատրճանակի գնդակները իրենց նպատակին չեն հասնիր եւ Գուրպէթեան ոճրագործ մը ըլլալու զրթբախտութենէն կագատի :

Կրկին ոստիկանութիւն վրայ կը հասնի—կը ձեռքակալէ կուողները . երկու ժամէ վերջը Գուրպէթեան ազատ կարձակուի յայտարարելով որ ինք ատրճանակ պարպած է իր կեանքը ազատելու համար . իսկ Մեքսիկա վարժապետեան ուրիշ հայու մը հետ բանտարկուած կը մնան : Գուրպէթեան բանտէն արձակուե-

լէն յետոյ կսկսի միջոցներ ձեռք առնել կատարողութիւնը եւ հասարակութիւնը համոզուելու համար որ Սեւրոպ վարժապետեան ոչ թէ իրեն ուղղած վերադարձութիւն համար գացած է իր քով . այլ Գաշնակցականները թելադրած են . ու կրեն թէ Վերուոնք օի խմբագիրը իր աշխատակից թիւթիւնճեանի հետ հեռագիր հեռագրի վրայ կը քաշեն Սօֆիա վասնայի դաշնակցականները աքսորել տալու համար : Սիւս ճամբա . պուլկար կուսովարութիւնը . թուրք կուսովարութիւնը չէ : Գուրպէթեանի արբանակները յոյս ու հոն կը պարծենան որ Գուրպէթեանի հրամանով ուստի կանուութիւնը տղաքները կը ծծէ . որ բացարձակ սուս է :

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՍԱՍԻՆ

Բարիք . 2 օգոստոս 1902

Հսեցիք անշուշտ թէ վերջին շաբաթու մէջ Բարիքի մէջ համաժողով մը տեղի ունեցաւ սպիտակամորթ անձնու մարմնոյն առետուրին վրայ . Այս անթիւ թուրք բժիշկ մը . Իսմայիլ Կէմալ պէյ . նախկին զինուորական բժիշկ թուրք բանակին . հետաքրքիր յայտագիր մը հրատարակեց Բարիքի մէջ եւ զոր մենք ամբողջութեամբ կը հրատարակենք թարգմանելով . որովհետեւ նա բաւական լաւ կերպով դուրս կը բերէ թուրքի սանէն կեղտոտ բարքերէն մին : Մենք ներողութիւն կը խնդրենք այնտեղ պատահող . . բաց բերան նախարարութեանները ընթացողին առաջ պարզի առիպուած լինելու . բայց ստիպուած ենք ամբողջութեամբ թարգմանել . գուցէ յայտագիրս համոզոտն ալ այնտեղ է . Երբեմն փակագծի մէջ մենք մեր նկատողութիւնները պիտի գրենք :

«Սպիտակամորթ կիներու վաճառումը թուրքիոյ մէջ»
Այս միջոցիս Բարիքի մէջ համաժողով մը գումարուած է . որուն նըպատակն է միջոցներ փնտնել ջնջելու այն ամօթալի սովորութիւնները որոնք հետեւեալ բառերու մէջ կը ըստանդակուին՝ սպիտակամորթ կիներու վաճառումը :—Մաղաքակիրթ ազգիքէն շատերը արժան համարեցին . պատճառաւ որ մը զրկելով այդ համաժողովին . որչափ կարելի է ընդարձակ կերպով մասնակցելու այդ մարդկութեան դէմ եղած ոճիւրներու զսպումին :—Սակայն նշմարելի եղաւ թուրք կատարողութեան ներկայացուցիչն Բացակայութիւնը . եւ սպարը մոտացում մը չէ Բ . Գրան կրթութիւնը մըն է . որուն պատճառները պիտի բացատրենք :

Ժամանակէ մը ի վեր մտուել . ազնիւ մարդոց զայրոյթին յայտնեց մարդկային մարմնի վաճառականներու ստորնագրոյն առուտուրը . որ վաճառականները շարը գործածելով ինքն աղիկներու վատահուր զիտանոց շահուոր եւ պատուար զիտքեր խոստանալով իրենց երկրէն կը հեռացնեն . յետոյ զանոնք պոտնկութեան մատնելու :

Բայց ինչ որ թերթեր չեն պատմած եւ զորս մենք քաջութիւնը պիտի ունենանք ըսելու . այն է թէ այս խարհի մէջ չիկայ գուցէ երկիր ուր սպիտակ կիներու վաճառումը

ԲԱՅ ՆԱՍԱԿ

Արժանապատիւ

Տեղ Սարգիս Բահանայ Ղարապետի Վառնայ

Տէ՛ր հայր ,

Արգարնու շատ պիտի զարմանայինք կարգաւոր՝ քաղաքի մէջ հրատարակուող ու իր հետեւած ուղղութեան բողոքովին հակասական անուն մը կրող թերթին 40 թիւէն մէջ Պուրբէշէն գրուած բաց նամակ մը, ձեր հասցէին, պիտի զարմանայինք՝ ո՛չ թէ անոր համար, որ այդ նամակը ստորագրող անձերը իբրեւ հանրածանօթ ճշմարտասէր հարցասէրներ (?) ի՞նչպէս ուղած են անիրաւաբար համակրելի և գործունեայ քահանայի մը վարկը բեկառել, ալ պիտի զարմանայինք անոր համար որ՝ ի՞նչպէս թերթի մը խմբագրութիւնը ստանձնող մէկը կոյր զկուրայն կը մեղաւորէ քանի մը սկզբունքէ զուրկ ոչ իբրեւ օրհնեցողութեան գոհացում տուլու, որոնք այլ եւս անհամ ու տաղտկալի դարձած են իրենց իմաստակ ու շարամիտ հարցասիրութիւններով, պիտի զարմանայինք՝ եթէ չի գիտնայինք թէ՛ ամեն վեց ամիսը անգամ մը քաղաքէ քաղաք բաժանորդ մտրացող խմբագիր մը գեռ ո՞ր աստ/ճան չը պիտի ստորնանար անուն մը միայն աւելի արձանագրելու համար՝ իր վտիտ բաժնեցանկին վրայ :

Ձեզ կ'ամբաստանեն, տէ՛ր հայր, թէ Գէորգ Վասպուրականցիին ալ ստորագրել տուած էք, ձեր Պուրբէշի մէջ ըրած հանգունակութեան ցանկը, ոհակառակ իրենց կամքին. արգահատելի չէ՞ք գտնել իրենց այս ապուշ գիտողութիւնը. լրջատու անձ մը պիտի մտածէր որ արգէն տարբեր կերպով չէ՛ք կրնար վարուիլ, քանի որ՝ ինչպէս իրենք ստորագրած են իբրեւ վրէժսյութիւն մը իրենց միջոցաւ հաւաքուած դրամին ճշտութեան, պարոն Գէորգն ալ պէտք էր ստորագրէր իբրեւ վկայութիւն մը իր ընկերակցութեամբ դիմուած տեղերէն հաւաքուածին. խեղճերը՝ իբրեւ այն ատենուան Պուրբէշի հայկական ընթերցարանին անպաշտօն կերպով կարգադիր մասնախումբ, իրաւունք ունենալ կարծած են ձեր հաշուեցուցակները Պուրբէշի բողոք հայ գաղթականութեան ի դիմաց վաւերացնելու ի՞նչ որ եթէ իրօք այդպէս եղար ըլլար բողոքի և զայրոյթի իրապէս տեղի պիտի տրուէր, որովհետեւ թուղէք որ ընթերցարանի մը վարչութիւնը ազգային պաշտօնական

ներկայացուցիչ մը ըլլալու հանգամանք չունի. ատենք ոչ իսկ գոնէ ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած անդամներ չէին : Այդ անձերը՝ որոնք ստորագրութիւն մը գնելու համար այնքան ժամանակի պէտք ունին՝ որքան դուք երկու «սէկարէթ» ծխելու, էպէս բողոքովին աւարտող ընթերցարանի մը վարչութիւնը ստանձնելու, իրենց շուրջ հաւաքուած հացկատակներու լէզէնի մը դողումով, երբ որ խոտովութիւններ հանցին նախորդ արժանաւոր վարչութեան անդամներուն շուրջը, այս վերջիններն ալ հրաժարելով ատենց յանձնեցին աւժամարար, ընթերցարանի վարչութիւնը, ու հիմակ ալ առիթը գտած կարծեցին ձեր վրայ անիմաստ զբոսապարտութիւն մը ընելով, իրենց Պուրբէշի հայկական ընթերցարանին կարգադիր մասնախումբ ըլլալին, բաժանորդագրի մը վճարումով հռչակելու :

Արդ առիթը չէ՞ հիմա հարցնելու թէ՛ եթէ այդ պարոնները այնքան նախանձախնդիր են հաշիւներ վաւերացնելու կամ կանխաբանութիւնը յարգելու, ինչո՞ւ մինչեւ ցարգ չի վաւերացուցին ընթերցարանի նախկին վարչութեան հաշիւներուն ճշգրտութիւնը. . . . ինչո՞ւ իրենց պաշտօնավարութեան միջոցին հաշիւները չի ներկայացուցին Ի՛նչ զարմանաք, տէր հայր, երբ այս մարդիկ ձեր հայրական օրհնութիւնները լիով ստանալէ յետոյ՝ ելան ըսին թէ՛ հայր Ղարապետը իր կարգին վրայ երգում ըրեր (?) երկու անգամ «մեղա» է ըսել (?), շատ հաւանականաբար վաղն ալ աւելի ծանրագոյն զրպարտութիւնով մը մրտաբու ուղեն հայաստանայց կեկեղեցոյ կարգաւորի մը արժանաւորութիւնը «խաչագող» մակդիրով, որովհետեւ այդ բառը իրենց շատ սովորական մէկ գործածութիւնն է :

Բայց անհոգ եղէ՛ք տէր հայր, Պուրբէշի գաղթականութիւնը կը ճանչնայ ճշմարտութիւնը գիտէ գնահատել ձեր ջանասիրութիւնը, որով իսկ կրցաք յաջողիլ ձեր գիտարին ստանձնումին մէջ :

Օրհնեցէ՛ք, տէր հայր, ձեզ համակրող Պուրբէշի գաղթական երիտասարդութիւնը :

Արմենակ Պարակոս
Մարգար Գրիգորեան
Գէորգ Աճէմեան
Խաչիկ Մանուկեան

ՊՕԵՐ ՊԵՏԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Օրանժի հասարակապետութեան նախկին նախագահ անցեալ շարաթ օր հասեր է Սառնիթիթին :

Ականաւոր ճամբորդը իսկոյն տեղափոխուեր է Հոլլանտական նաւ մը. նաւամատոյցին վրայ ճիթէյի բազմաթիւ բարեկամները և համակրողները կապան եղեր Քաջ նախագահը, որ զէն ի ձեռին կը գիմագրէր Անգլիոյ, Եւրոպա կուգայ ծանր հիւանդութեան մը պատճառով :

Այդ պատճառով ալ ճիթէյի համար համակրական աղմկալի ցոյցեր չեն տեղի ունեցեր : Կրտսի թէ ճիթէյն և Քրիկէր ճէվէնիզի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենան և պիտի խորհրդակցին թրանսպալի և Օրանժի մէջ պօէրական կուսակցութիւն մը ստեղծելու համար որ պիտի պաշտպանէ երկրին անկախութեան դատը :

Օգոստոս 3ին Անգլիոյ մէջ կ'սպասուին Տոնէտ, Տէլարէյ և Պոթա զօրավարները, որոնց համար փառաւոր ընդունելութիւն մը կը պատրաստուի :

Երեք զօրավարները նաւային հանգէսի մը պիտի ներկայ ըլլան և վերջը թագաւորէն պիտի ընդունուին : Այդ տեսակցութեան ներկայ պիտի ըլլան նաեւ անգլիական զօրավարները՝ Ռօպէրթս և Քրիչնէր :

Ըստ «Արդանտա» թերթի պօէր զօրավարները նաեւ պիտի տեսակցին Պալֆուրի ու Ջէմպրէնի հետ 8 միլիոն անգլիական ոսկիի փոխառութեան խնդրի, և կարգ մը ուրիշ խնդիրներու մասին խորհրդակցելու համար :

Պօէր զօրավար Լուկա Մէյէր արգէն Հոլլանտա կը գտնուի և Քրիկէրի հետ տեսակցութիւն ունեցեր է :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վառնայի հայ հասարակութեան յայտնի է որ, անցեալ օր, «Իրաւունք» ի խմբագիր Գուրպէթեան, մկրտված Հասան Եէֆըի Գուրպէթ օղլու, մի փառաւոր ծեծ կերաւ Մեսրոպ Վարժապետեանից, որին Գուրպէթ օղլուն իր թերթի մէջ անպատիւ էր :

Գուրպէթեան չը նայելով որ մի քանի անգամ ատրճանակ է պայթեցնում, այնու ամենայնիւ գետին է տապալվում և իր կաշու հաստութեան յարմար հարուածն ր ուտում իր բողոքովին անձնական հակառակորդից :

Այդ ծեծը Գուրպէթեան մար-

այնքան տարածուած լինի որչափ թուրքերն մէջ : — Եւ, ծանրացուցիչ պարագայ որուն վրայ մասնաւորապէս ժողովականներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, ոչ թէ ստորգասակարգի, այլ պաշտօնական կառավարական շրջաններու մէջ է որ տեղի կուենայ այս ամօթալի առեւտուրը : (Մենք բողոքովին համաձայն չենք այս վերջին նախագաւթեան, եւ կը կարծենք թէ այդ առեւտուրը կը պատահի թրքական բողոք խաւերուն մէջ, «տիւրիզ իլէ պուսնը» պիտի պիտի նստէ ուղորդող) : — Օրինակը սուղը թուրք կառավարութիւնը եւ Սուլթանը ինքն է : — Շատ եւրոպացիներ այս գրութեան պատասխանատուութիւնը կը ձգեն արեւելեան բարձրուն (թրքական բարձրուն եթէ ըսէիք, աւելի ճիշդ խօսած կը լինէիք, «տեթթօր էֆէնտի») : Մուհամմէտի կրօնքին վրայ (չիտակը զրուցեցէք, անիրաւ ևն), տեղեակ չի լինելով այն բարձրուն եւ մահմանական կրօնքի սկզբունքներուն, որոնք միայն մէկ կին կը թոյլատրեն (միթէ՛, ի՞նչու դուք Մուհամմէտին առաջ չի ծնաք այս բանը ընելու, հայ վա՛խ) : Բացի մի քանի պարագայներէ (առանց բացառութեան օրէնք չի կայ ըսուած է, բայց կը կարծենք թէ մեզ զբաղեցնող խնդրոյն մէջ բացառութիւնները բացարձակապէս կը թագաւորեն, իսկ օրէնք չի կայ պարոն բոխիկ) ուր կ'իյնար թիւրք կրօնքի մինչեւ կ'ի հասնիլ, առանց անդին անցնիլ : (Է աւելի ալ ի՞նչ կուզէիք, հայ պապաւ, միակնութիւն տիրող երկիրներու մէջ մարդիկ իրենց մէկ հատիկ չընող երեսէն ետեւին կը թօթուեն...) — Երբ մահմէտականի մը կ'ընէ անդ է եւ եթէ բոխիկները կը վկայեն անոր անբուժելի անութեան մասին (մեղայ, մեղայ, մեղայ, հապա մահմէտամբ ի՞նչ ըրիք, տէօթթօր) այն իրաւունք ունի իբր ցեղը շարունակելու համար, երկրորդ կին մը ալ առնելու : — Եւ յայտնա երրորդ կին մըն ալ կրնայ առնել եթէ երկրորդը իրին զուակ չի տուաւ, բայց չորրորդ ամուսնութենէ մը յետոյ որ անհետեւանք կը մնայ, հակառակ բողոք բոխիկներու գաղափարին (աղբար հանգիստ թողուցէք բը ժիւլիներ...) : մահմետական օրէնքը կը նկատէ թէ ամուսնութեան ճիշդ կողմէն անոր կարգիլէ նոր փորձ մը փորձել : (վերջապէս կը հասկընայ իր քեր, հա՞, աւելի լաւ է ուշ քան երբէք) — Ամուսնալուծութիւնը եւ բազմակնութիւնը նոյնպէս թոյլատրուած են եթէ կ'ընէ շնանայ եւ կամ այնպիսի անբուժելի հիւանդութիւն մը ունենայ որ չի կարենայ իր էրկան պահանջներուն պահանջումայ : (քանի որ ամուսնալուծութիւնը կը թոյլատրուի մահմետական կողմէն մէջ, ալ ի՞նչ տեղի կայ չորս կին պահելու, ամուսնալուծութեան արձակելու, պողաբեր մը պահելու է, էֆէնտի) : — Այսպէս ուրեմն ըստ զուրանի մահմետականը պէտք է միակին լինի (կը չափազանցէք տեթթօր) եւ եթէ լուրջ պատճառներու համար իրեն թոյլ տրուի մի քանի կին ունենալ, երբէք չի կրնար չորս աւելի ունենալ :

Մեյիթ Ս. Դաւթ քէկ (Շարունակելի)

սել չէր կարող. նա զիմում է նախ թրքական միջոցներով ուստիկանութեան առջեւ իր և մի քանի իր նմաններով կուսակցական գոյն է ուղղում տալ, և փողոցներում իր արբանեակներով մօտ իրեն յատուկ աներեսութեամբ սպառնալիքներ է կարգում բոլոր դաշնակցականներին հասցէին. մասնաւորապէս իմ:

Առ ես զուարճանում եմ, և միշտ պիտի զարճանամ, քանի որ Գուրգէթեանը իր սպառնալիքները չի կատարել. գոնէ իմ վերաբերմամբ:

ՎԱՐԴՈ

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Օրիորդ Ե. Ամիրխանեանց Եւրոպայի Հայ Ուսանողական Ինստիտուտի կողմէ արտօնուած է Վառնայի մէջ ի նպատակ միութեան գրամ հանգանակել: Յուսալի է սր Ուսանող. Միութեան համակիրները օրիորդին պիտի քաջալերեն ըստ արժանւոյն:

Հանգանակութիւնը կը կատարուի զխաւորապէս Ուսանողական Միութեան ֆրանսերէն լեզուով մեծ հրատարակութեան համար:

Վենետիկի մէջ սկսեր է հրատարակուիլ «Հայ—Հանգէս» անունով երկշաբաթաթերթ մը: Ինչպէս կերպի խմբագիրները են Լեւոն Բաշալեան և Արփիար Արփիարեան:

Այս օրերս ստացանք Ք. Չօպանեանի ֆրանսերէնի իտալականում հայ բանաստեղծութիւնները որուն կցուած է Գարրիէլ Մուրէի ուսումնասիրութիւնը, զորս հայասէր ֆրանսացիներ արտասանած է ի նպատակ որբերու տուած գրական հանդէսին:

Ստացանք հայր էփրիկեանի պատկերազարդ և գեղեցիկ աշխատութեան բնաշխարհի բառարանին առաջին հատորին վերջին պրակը:

Առաջին հատորը օժտուած է սիրուն կողքով մը, որուն առաջին երեսը կը զարդարէ Մայր Հայաստանի վշտաբեկ ոգին, իսկ վերջին սեղանի մը շուրջը՝ բոլորած նշանաւոր ազգային գործիչներու ջր պատկերներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պօլիս հասեր են 100ի շափ ճիզուիթներ և պիտի մեկնին Փոքր Ասիա:

Սուլթանը իրատէով մը հրամայած է Մակեդոնիոյ մէջ վերահաստատել նահանգապետներ:

րու օգնականներու, ելեւմտից և արդարադատութեան տեսուչներու պաշտօնները:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Նաբաթ մը առաջ Բլէթիայի իշխանութիւնները գրաւեր են տեղակալ Մակեդ. մասնաճիւղ քով գտնուած Մակեդոնական ազգային փոխառութեան տոմսերը:

Պատերազմական նախարարի հրամանով Բրէզնիկի պահեստի զօրաց վաշտը մեկնել է դէպի Մակեդոնիոյ սահմանագլուխը: Երկու վաշտ ալ Սօֆիայի հեծելազօրքէն գացեր են Գիւրգէնտիլ Սօֆիայի գաւառի մէջ. 15 քիւլոմէթր տարածութեան վրայ, ուստիկանութիւնը զօրեղացուցեր են:

Այդ բոլոր կարգադրութիւնները նպատակ ունին Պուլկարիայէն Մակեդոնիա անցնող հրոսախմբերուն արգելք հանդիսանալ:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ս

Խիբուլի Ինսքուզ քաղաքէն կ'հայրորդեն աստիճանական թերթերուն որ վերջին օրերս հարաւային Խիբուլի մէջ ժողովներ կը կազմեն իրենց նիւթական վիճակը բարելաւելու մասին խորհրդակցելու համար: Այդ ժողովներու մէջ ուսուցիչները ազնկալի ցոյցեր ըրեր են իշխանութեանց դէմ. որովհետեւ կառավարութիւնը ճնշում կը բանցնէ ուսուցիչներուն դէմ: Որոշում կայացրեր է զիմել կառավարութեան ուսուցիչներին վիճակը բարւոքել պահանջելով:

Ս Ե Ր Պ Ի Ս

Սերպիոյ մէջ կազմակերպուեր է Մակեդոն—Սրպական—հայրենուիրական ընկերութիւն մը: Այդ ընկերութեան գլխաւոր նպատակն է հալածել Մակեդոնիոյ մէջ գտնուող պուլկար տարրեր: Կանոնագրութիւնը կազմուած է 20 յօդուածներէ: Բ. գոմիթէին նախագահն է Բիսոպ Բօրօ վիշ:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Չը նայելով որ Ալգաս Լօրէնի մէջ գրիկթաթօրութիւնը ջնջուեցաւ, այնու ամենայնիւ օտարթերթերը դեռ գրաքննութեան կը ենթարկուին: Յրանսական «Բէլէսին» թերթին մուտքը արգիւտուեր է:

Թ Ր Ո Ւ Ս Վ Ա Ս Ա

Անգլիական թերթ մը կը հարգէ որ անգլիական կառավարութիւնը ջնջած է օտար թերթերու մուտքը արգիւտուելու հրամաններ: Ուրեմն այսուհետեւ թրանսվալիան վալցիները և խոզները թրանսվալիան թրանսվալիան թրանսվալիան:

րութիւնը ջնջած է օտար թերթերու մուտքը արգիւտուելու հրամաններ: Ուրեմն այսուհետեւ թրանսվալցիները պիտի կրնան հասկնալ թէ աշխարհի մէջ իրենց մասին ինչ կը խօսուի:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Սը—Չուանի մէջ կացութիւնը վրդովուած է: Ամեն կողմերէ լուրեր կ'ստացուին որ չինական կանոնաւոր զօրքերու և խոզարարներու միջեւ ընդհարումներ տեղի կ'ունենան:

Կը լսուի նաև որ Չինացիներ կրկին քրիստոնեաներ սպաննած են:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

24 յուլիս Իզմիր

Այսօր ժամը 9 1/2 ին երկու հայ երիտասարդներ կը մտնեն Թօփալեանի խանութը, և գնդակահար կընեն Գարեգին Ս. Մանիկեանը, Ամերիկահայաստակ հայր մատնողը: Խանութին դուռը բաղձութիւնը կը լեցուի, երիտասարդները առանց ժամանակ կորսնցնելու ատրճանակները կրակելով ճամբայ կը բանան և կանհետին: Մատնիչը 5 գնդակ կերեր է. վիճակը ծանր է, տեղափոխեր են հիւանդանոց, արդէն Ա. Հաղորդութիւն ընդուներ է:

Մատնիչը սպաննողները ձօրակալուած չեն:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱԲԿԷՆ ՍԻՆԻՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Գիւրգէնտիլ» ի նպատակ Հայ Ուսանողական Միութեան:

Գիւն է 1 լէֆ արծաթ, կը ծախուի նաև «Վարկի Աղատութեան Ճանապարհին»:
Գիւն է 90 սանթիմ Վառնա

Ա Ն Ո Ւ Շ Ա Ւ Ա Ն

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

Ա Ղ Ջ Կ Ա Ն Մ Ը Յ Ե Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ը

Վէպ մը իրական կեանքէ Մամրոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան Բանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիւրութիւն ընծայուելու համար:
Բաժնեգրին է 4 ֆրանք. բոսթի ծախքը հրատարակչին վրայ:

Տպագրութիւնը աւարտելուն զօրքերը կը յանձնուին բաժանորդներուն: Գոյանալիք հասցիքը ամբողջին կը նուիրուի «Հայկական կարմիր խաչ» ընկերութեան:

Բաժանորդագրութեան համար գրեմել հետեւեալ հասցէին:

Մուրատ Երանոսեան

(Պուլկարիա)

ՎԱՌՆԱ

ԽՄԱԿԱՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը սպազորուին ամէն լիզակ այցետոմս, հասցէտոմս, նամակազուլիս, հարսանեկան հրակրակի, մահազգ:

Գիւնը յոյժ գիւրամուտքի է: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ԸՆԴՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՆԻՍՏԱՆ

ԵՐՈՎԱԿԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ Ուսման Ինստիտուտի կողմէն արտօնուած է «Հայ—Հանգէս» անունով երկշաբաթաթերթ մը: Ինչպէս կերպի խմբագիրները են Լեւոն Բաշալեան և Արփիար Արփիարեան:

Ինչորք Երևոյ լէֆօզ Եր Շիփի Սուխա Փընէլ Կարգողի Յանձնաժողով

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Յրանսայի նշանաւոր վեպաստեղծ Ռոնէ ար Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ և բարոյալից վէպին

15^{րդ} և 16^{րդ} թերթերը

հրատարակուեցան:

Գիւրքը չարաթը երկու թերթի հրատարակուի և իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի: Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժնեգրին 1 ֆրանք Ուրիշ քաղաքներու և արտասահմանի համար 4 ֆրանք:

Վառնայի դուռ, Պուլկարիոյ և արտասահմանի համար հինգ թերթ մէջ ծրարով կը զրկուին. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է: Գիւնը հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varsovie Գրամի փոխարէն նամակազուլ կ'ընդունուի:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ — Варшава